ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Սույն թվականի հունվարի 20—28 օրերին Հարավային Աֆրիկայի Յոհաննեսբուրգ քաղաքի մոտակայքում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան հերթական նստաշրջանը: Նստաշրջանին մասնակցում էին, բացի Կենտրոնական Կոմիտեի անդամներից և ԵՀԽ-ի պաշտոնեությունից, դիտորդներ, խորհրդականներ և երիտասարդության ներկայացուցիչներ՝ ընդամենը շուրջ 300 հոգի:

Ժողովը նստաշրջանում լսեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դր. Կոնրադ Ռայզերի և Կենտրոնական Կոմիտեի ատենապետ Տ. Արամ Արքեպիսկոպոս Քեշիշյանի հաշվետու զեկուցումները նախորդ ժողովից մինչև ներկա նստաշրջանն ընկած ժամանակաշրջանում ԵՀԽ-ի և նրա առանձին բաժանմունքների գործունեության մասին:

Նստաշրջանում առանձին զեկուցումներ լսվեցին «Հավատո և Կարգի» հանձնաժողովի, Սանտիագո դե Կոմպոստելլո (Իսպանիա) քաղաքում կայացած վերջին համագումարի, ԵՀԽ-ի և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու միջև զարգացող հարաբերությունների, եկեղեցում աշխարհականների ներգրավման և նրանց դերի, Հարավային Աֆրիկայում եկեղեցական կյանքի անցյալ և ներկա վիճակի, կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված տասնամյակի ներկա փուլում կատարված աշխատանքների, մարդկության կյանքին սպառնացող Սիդա վարակիչ հիվանդության հասցրած վնասների ու նրա կանխարգելման, ինչպես նաև այլ հարցերի մասին:

Ապա նստաշրջանի մասնակիցները հետագա օրերին հինգ խմբերի բաժանվելով՝ քննարկեցին իրենց բաժանմունքներին վերաբերող հարցեր, ինչպիսիք էին՝ եկեղեցական միության, աստվածաբանական կրթության, կանանց և երիտասարդների դաստիարակության, առաքելության և ավետարանչության, հասարակության և արդարության, ցեղային խտրականության և անդամ Եկեղեցիները մտահոգող այլ բազմաթիվ քաղաքական, ընկերային հարցեր:

Նստաշրջանի օրերին տեղի ունեցան հատուկ հանդիպումներ Կենտրոնական Կոմիտեի անդամ Օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչների

միջև, որոնց ընթացքում շեշտվեց ԵՀԽ-ի գործունեության ոլորտում Օրթոդոքս Եկեղեցիների առավել գործուն մասնակցության անհրաժեշտությունը: Հանդիպումներ ունեցան նաև նախկին Խորհրդային Միության, Արևելյան Եվրոպայի երկրների Եկեղեցիների ներկայացուցիչները, որոնք իրենց երկրներում կրոնական, քաղաքական, տնտեսական, ընկերային կյանքի իրավիճակի մասին տեղեկություններ հաղորդեցին:

Հունվարի 22-ին, շաբաթ օրը, տեղի ունեցավ Հարավային Աֆրիկայի մշակույթին նվիրված երեկո, որին ներկա եղան նստաշրջանի բոլոր մասնակիցները և տեղական Եկեղեցիների հոգևոր առաջնորդները:

Նստաշրջանի սկզբում Յոհաննեսբուրգ քաղաքի Ավետարանական Մայր եկեղեցում տեղի ունեցավ նստաշրջանի բացման հանդիսավոր արարողություն՝ մասնակցությամբ Հարավ-Աֆրիկյան քրիստոնեական Եկեղեցիների հոգևոր առաջնորդների, որոնց շարքում էր նաև Տուտու Արքեպիսկոպոսը:

Հունվարի 28-ին, երեկոյան, նիստերի դահլիճում տեղի ունեցավ նստաշրջանի փակման արարողությունը:

Սույն նստաշրջանում ԵՀԽ-ի նոր անդամներ ընտրվեցին Ալբանիայի Օրթոդոքս Եկեղեցին և Հարավ-Աֆրիկյան Ավետարանական Եկեղեցին:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ
Անդամ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի
Կենտրոնական Կոմիտեի